



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«08» 12 2020թ. ____ ք. Երևան

ՀՐԱՄԱՆ 111-Պ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով «Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության ՏՀ 01 «Էներգետիկա» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի ՀՍ ՌՍՕ/ՍԻԷ 8995-3-2020 «Աշխատանքային վայրերի լուսավորություն. Մաս 3. Բացօթյա աշխատանքային վայրերի անվտանգության և պաշտպանության համար լուսավորությանը ներկայացվող պահանջներ» ազգային ստանդարտի 2020 թվականի նոյեմբերի 30-ի առցանց քննարկումների N2 արձանագրությունը և ՀՍ ՌՍՕ/ՍԻԷ 20086-2020 «Լույս և լուսավորություն. Լուսավորության էներգաարդյունավետությունը շինություններում» ազգային ստանդարտի 2020 թվականի դեկտեմբերի 07-ի առցանց քննարկումների N1 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել և 2021թ. փետրվարի 1-ից գործողության մեջ դնել հետևյալ ազգային ստանդարտները՝
 - ՀՍ ՌՍՕ/ՍԻԷ 8995-3-2020 «Աշխատանքային վայրերի լուսավորություն. Մաս 3. Բացօթյա աշխատանքային վայրերի անվտանգության և պաշտպանության համար լուսավորությանը ներկայացվող պահանջներ»
 - ՀՍ ՌՍՕ/ՍԻԷ 20086-2020 «Լույս և լուսավորություն. Լուսավորության էներգաարդյունավետությունը շինություններում»:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի առաջին տեղակալին:

Տնօրեն

Ժամանակավոր պաշտոնակատար՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ